զԵւրոպիա[1] անցուք ի հարաւկոյս մինչեւ ցՅունաց ծովն։

47 [2]**Թ. Բնաշխարհ Եւրոպիայ՝** Սարմատաց[ւ]ոց[3] աշխարհին հասարակն է, յարեւելից կալով Գերմանաց[ւ]ոց[4], առեալ ի Իիստուղա[յ][5] գետո[յ] եւ ի հոմանուն իւրեանց լերանց, առ հիւսիսա[յ]ինն Ովկիանոսիւ մինչեւ ցԱնծանաւթ երկիր եւ ցծայր արեւ[ել]եա[յ][6] Ռիպ[ե]ա[յ][7] լերինն, յորում ելանէ Տանայիս[8] գետ, բայց ամենայնդ[9] ի միջաւրեա[յ] կոյս բաժանէ Սարմատիա յերկուս, զելիցն՝ յԱսիա, եւ զարեւմտիցն՝ յԵւրոպիա[10], մինչեւ մտանէ ի Մէոտիս[11] ծովակ՝ նաւով զնոյն գործելով մինչեւ ցՊոնտոս ծով եւ ապա՝ Պոնտոսիւ։ 48 Եւ Տիւռաս գետով սահմանի ըստ հարաւո[յ] կուսէ, որոշէ զԴակիաց[ւ]ոց[12] աշխարհն ի Սարմատիո[յ]։ 49 Եւ ունի Սարմատիա աշխարհս փոքունս, ի քրիստոնէից՝ զՏաւրական ցամաք[ա]կղզին[13], այսինքն զՔեռսոն, որ կա[յ] ի մէջ Բիւկեան լճին եւ Մէոտիս[14] ծովակի[15] եւ Պոնտոսի, եւ մտիցն Կարկինիտեա[յ][16] գետոյ ի հոմանուն ծոց։ 50 Իսկ ի հեթան[11բ]ոսաց՝ բազումս, յորոց մին կոչի Ամաքսաբիո[յ][17], որ են [Ս]այլակենցաղք[18]։ 51 Ունի լերինս բոլորս եւթն[19]։ 52 Արձակէ եւ ի Պոնտոս գետս բազումս, որք յիրե[ա]րս[20] անկեալ[21], անուանեն զմինն Կոչոյ [...][22]։ 53 Ունի փոքր լիճ մի, եւ կղզիս երկուս[23] եւ երկու[24] բագին, [մին կոչի Աղեքսանդրու[25], եւ միւսն՝ Կեղարու][26]։

54 [27]**Ժ. Բնաշխարհ՝** Թրակացւոց աշխարհն, յարեւելից Դաղմատիո[յ][28] եւ առ երի Սարմատիո[յ]՝ առեալ ի Տառոս գետո[յ] մինչեւ ի Դանոբ։ 55 Ունի փոքր աշխարհ հինգ[29], եւ այլ աշխարհ, որ կոչի Վեռիւմուս[30], եւ Դառդանիա չորեքքաղաքեան. իսկ ի միջաւրեա[յ] կուսէ՝ զինքն զԹրակիա[31]։ 56 Իսկ ըստ արջնա[յ]ին կողմանէն՝ մեծ աշխարհ Դակիա, յորում բնակեն Սկլաւք[32]՝ քան

1 V-ի գրիչը գրել է՝ զԵւռոպիա, ապա կայծակնաձեւ նշան դրել ռ-ի վրայ. հմմտ. նախ. Գ.1, 9 եւն
2 Ըստ Երեմեանի՝ վերականգնելի է ենթավերնագիր. «Յաղագս Եւրոպիոյ Սարմատացւոց»
3 V Սարմատացոց փխ Սարմատացւոց (վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)
4 V Գերմանացոց փխ Գերմանացւոց (վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)
5 V Խիստուղա [ս-ի վրայ դրուած գրչի ուղղման կայծակնաձեւ նշանով], S ի Խիստուղա փխ ի Իիստուղա[յ] (վեր., տե՛ս բոլորագիր **իւ → խ**)
6 V արևեա փխ արեւելեայ (վեր. Սուքրեանի)
7 VS Ռիպա[յ] փխ Ռիպ[ե]ա[յ] (վեր. ըստ նախ. Ե.69)
8 V Տայանիս փխ Տանայիս (վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի. հմմտ. նաեւ նախ. Բ.30)
9 S զամենայնդ փխ ամենայնդ (V. գրուած է ա̅մ̅դ)
10 VS յԵւռոպիա փխ յԵւրոպիա (վեր.՝ ըստ Գ.1, 9)
11 V Մէստիս փխ Մէոտիս (վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. տե՛ս բոլորագիր **ո → ս**. պահել ենք նաեւ տոկայ Միովտիս ձեւը (նախ. Բ.30, Ե.70, 78. Ե. 71-ում կայ Մէաւտիս). Պտղոմէոսի մօտ Μαιῶτις է, համառօտում՝ Միովտիս եւ Միոտիս)
12 V զԴակիացոց փխ զԴակիացւոց (վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)
13 V ցամաքկղզին, S ցամաք կղզին փխ ցամաք[ա]-կղզին (վեր.՝ ըստ յաջորդների՝ նախ. Ե.154, 227)
14 S Մէովտիս փխ Մէոտիս (V)
15 V ծովակէ փխ ծովակի (վեր. Սուքրեանի)

16 V Կւրկինիտեա փխ Կարկինիտեա[յ] (վեր. Սուքրեանի՝ ըստ նախորդի (Բ.5) եւ Պտղոմէոսի)
17 V Ամաքսաբիո, S Ամաքսաբիու փխ Ամաքսաբիո[յ] (վեր., տե՛ս **ո → ո**. Պտղոմէոսի՝ Ἁμαξόβιοι)
18 V Այլակենցաղք փխ Սայլակենցաղք (վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի. տե՛ս բոլորագիր **սա → ա**)
19 V է̅, S եօթն փխ եւթն (վեր., հմմտ. Ա.8, Բ.10, 16)
20 V յիրերս փխ յիրեարս (վեր. Սուքր-ի՝ ըստ Դ.38)
21 VS անգեալ փխ անկեալ (վեր.՝ ըստ յաջորդի, տե՛ս նախ. Ե.307)
22 Ըստ Երեմեանի՝ Կոչոյ [եւ զմիւսն՝ Բորիսթենոս]
23 V բ̅, S երկու փխ երկուս (վեր., հմմտ. նախ. Ա.27, Բ.37, Գ.47, Դ.30, Ե.88)
24 V բ̅
25 ADEPv Աղեքսանդրու փխ Աղէքսանդրու (վեր.՝ ըստ V-ի միւսների)
26 Pv Կեսարու փխ Կեղարու (ADEv[3]) / VS չիք մին ... Կեղարու (1 տող) (վեր.՝ ըստ համառօտի. Կեղարու-ից յետոյ, գուցէ, կրկնուել է՝ բագին, որից էլ V-ի գրիչը վրիպել է, տե՛ս **բագին ... բագին**)
27 Ըստ Երեմեանի՝ այստեղ վերականգնելի է ենթավերնագիր. «Յաղագս Թրակիոյ»
28 VS Դաղմատիա[յ] [V-ի վերջին **ա**-ի վրայ կայծակնանշանով] փխ Դաղմատիոյ (վեր. Երեմ-նի)
29 V ե̅
30 Ըստ Երեմեանի՝ Վերի[ն] [եւ Ներքին] Միւս[իա]
31 S զԹռակիա փխ զԹրակիա (V. **ռ**-ն գրելուց յետոյ գրիչը վրան կայծակնաձեւ նշան է դրել, ուստի՝ պիտի վերականգնել **ր**-ով, ինչպէս այլուր է)
32 S Սլաւք փխ Սկլաւք (V. հմմտ. 3 տող յետոյ)